Տպագրված է 5 օրինակից:
Օրինակ N 2

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի

2003 թվականի 18.02
թիվ [illegible] հրամանով

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Մյասնիկյանի տարածքային բաժնում գրանցման N 2732.1003443
վկայական N 034 059466
26-02- 2003 թվական
Բաժնի պետ Ա. Գևորգյան

«ՆՈՐՔԻ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Նորքի տուն-ինտերնատ» (այսուհետ՝ տուն-ինտերնատ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Տուն-ինտերնատը ստեղծվել է «Երևանի «Նորքի տուն-ինտերնատ» պետական հիմնարկի վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:

2. Տուն-ինտերնատի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

3. Տուն-ինտերնատը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4. Տուն-ինտերնատի գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

5. Տուն-ինտերնատը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Տուն-ինտերնատը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Տուն-ինտերնատը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Հիմնադիրը պատասխանատու չէ իր ստեղծած տուն-ինտերնատի պարտավորությունների, իսկ՝ տուն-ինտերնատը իր հիմնադրի պարտավորությունների համար:

8. Տուն-ինտերնատը ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:

9. Տուն-ինտերնատը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

10. Տուն-ինտերնատի գտնվելու վայրն է քաղաք Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան 197[ա]:

11. Տուն-ինտերնատի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Նորքի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություն:
հայերեն կրճատ՝ ՆՏԻՊՈԱԿ
ռուսերեն՝ "Норкский дом—интернат" государственная неторговая организация
ռուսերեն կրճատ՝ НДИГНО
անգլերեն՝ «Nork Boarding-House» state non- trade organization.
անգլերեն կրճատ՝ NBHSNTO

II. Տուն-ինտերնատի գործունեության նպատակը և առարկան

12. Տուն-ինտերնատի հիմնական նպատակը միայնակ, սոցիալապես անապահով տարեց անձանց շուրջօրյա խնամքի ապահովումն է:

13. Տուն-ինտերնատի գործունեության առարկան է՝ տուն-ինտերնատում խնամվող

տարեցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նրանց սոցիալ-հոգեբանական և բժշկական օգնության կազմակերպումը, խնամքի իրականացումը, սննդով, հագուստով և կենցաղային այլ անհրաժեշտ իրերով ապահովումը,

III. Տուն-ինտերնատի գործառույթները

14. Տուն-ինտերնատն իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) կազմակերպում է տարեցների ընդունելությունը,

բ) աջակցում է նրանց հարմարվելու նոր սոցիալական միջավայրին,

գ) կազմակերպում է տարեցների կենցաղային սպասարկումը, ազատ ժամանցը, ապահովում է նրանց անկողնային պարագաներով, հագուստով, կոշկեղենով,

դ) ապահովում է համապատասխան սննդով՝ ելնելով խնամվողի առողջական վիճակից,

ե) կազմակերպում է տարեցների բուժումը, դիսպանսերիզացումը անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացումը,

զ) անցկացնում է սանիտարահիգիենիկ և հակահամաճարաքային միջոցառումներ,

է) պահպանում է խնամվողների անձնական գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

ը) կազմակերպում է հոսպիսային օգնություն,

թ) կազմակերպվում է մահացածների հուղարկավորությունը:

15. Տուն-ինտերնատը օրենքին կամ հիմնադրի որոշմանը համապատասխան, սահմանված կարգով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկման և կենցաղային սպասարկման ծառայությունների մատուցում, խնամվողների և նրանց աշխատանքի կազմակերպիչների ուժերով՝ հացի արտադրություն, գորգերի և գորգեղենի արտադրություն, փայտե արտադրատեսակների արտադրություն:

16. Տուն-ինտերնատը կարող է ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր , որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ:

IV. Տուն-ինտերնատի կառավարումը

17. Տուն-ինտերնատի ընդհանուր կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը:

18. Լիազորված պետական մարմինը՝

ա) ապահովում է տուն-ինտերնատի բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

բ) հաստատում է տուն-ինտերնատի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

գ) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տուն-ինտերնատի տնօրենի ներկայացմամբ հաստատում է տուն-ինտերնատի կառուցվածքը, աշխատողների թիվը և աշխատակարգը,

դ) իրականացնում է տուն-ինտերնատի գործունեության նկատմամբ վերահսկողություն,

ե) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում տուն-ինտերնատի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

զ) լսում է տուն-ինտերնատի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերստուգման արդյունքները, հաստատում տուն-ինտերնատի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

է) վերահսկողություն է իրականացնում տուն-ինտերնատի ամրացված պետական սեփականության օգտագործման ու պահպանման նկատմամբ,

ը) վերահսկողություն է իրականացնում տուն-ինտերնատի սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս տուն-ինտերնատի գույքի

գտագործման կամ վարձակալության հանձնման համար,

թ) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

19. Տուն-ինտերնատի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը:

20. Տուն-ինտերնատի տնօրենին պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը իրականացվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն:

Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կգտնեն պայմանավորվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

21. Տնօրենը կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

22. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

23. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով տուն-ինտերնատին և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

24. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս տուն-ինտերնատի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է պայմանագրեր,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է տուն-ինտերնատի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է տուն-ինտերնատի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում տուն-ինտերնատի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

է) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում տուն-ինտերնատի կառուցվածքը, աշխատողների թիվը, տուն-ինտերնատի կանոնադրությունը, ներքին կարգապահական և այլ կանոնները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում տուն-ինտերնատի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

ժ) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

25. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

26. Տնօրենի բացակայության ժամանակ, նրա հրամանով տնօրենի լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը:

27. Տուն-ինտերնատի աշխատողների իրավունքները պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, տուն-ինտերնատի աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

V. Տուն-ինտերնատի սեփականությունը

28. Տուն-ինտերնատի սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև տուն-ինտերնատի գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

Տուն-ինտերնատի գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում բարեգործական, նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները, կտակած գույքը:

29. Տուն-ինտերնատը իրավունք ունի օրենքների, հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշումների և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքն ու ֆինանսական միջոցները:

30. Տուն-ինտերնատին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ տուն-ինտերնատի լուծարումից հետո մնացած գույքի:

31. Տուն-ինտերնատի սեփականության պահպանման հոգսը կրում է տուն-ինտերնատը:

32. Տուն-ինտերնատի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

VI. Տուն-ինտերնատին ամրացված գույքը

33. Հիմնադրի որոշմամբ տուն-ինտերնատին անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

34. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից տուն-ինտերնատին ամրացված գույքը:

35. Տուն-ինտերնատը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Տուն-ինտերնատը իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում տուն-ինտերնատի ստացած եկամուտները տուն-ինտերնատի սեփականությունն են:

36. Հիմնադրի կողմից տուն-ինտերնատին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ տուն-ինտերնատի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

VII. Տուն-ինտերնատի ձեռնարկատիրական գործունեությունը

37. Տուն-ինտերնատը իր հիմնական գործունեությանը զուգընթաց ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով տուն-ինտերնատը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

38. Տուն-ինտերնատը գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:

39. Տուն-ինտերնատը իր կարիքների համար գնումները կատարում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տուն-ինտերնատի համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում տուն-ինտերնատի կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Տուն-ինտերնատի կողմից պետությանն այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

40. Տուն-ինտերնատը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

VIII. Վերահսկողությունը տուն-ինտերնատի գործունեության նկատմամբ

41. Տուն-ինտերնատի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

42. Տուն-ինտերնատի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման(աուդիտի)՝ լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման կողմից:

IX. Տուն-ինտերնատի վերակազմակերպումը և լուծարումը

43. Տուն-ինտերնատը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Տուն-ինտերնատը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

44. Տուն-ինտերնատի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

45. Տուն-ինտերնատը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

46. Տուն-ինտերնատը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

47. Տուն-ինտերնատի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Верно: 6 февраля

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՆԱՉՎՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ ՈՒՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ:

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԻՐ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՄԲ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՏԼՈՐԻՆՈՒՄ Է ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ: ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՉՊԵՏՔ Է ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ, ԽԱԽՏԻ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՐՈՂ Է ՁՐԿԵԼ ՄԻԱՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ՝ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է միակ փաստաթուղթը, որը հաստատում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքը եւ սեփականատիրոջն իրավունք է տալիս կատարել անշարժ գույքի հետ կապված Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործարքներ:

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ է Պետական սեփականության ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
սեփականության (օգտագործման)

Հ. Հ. Արարատյան ստանձնություն Նախարարության
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը)

Վենետիկյան-ի արդարադատության
նախարարության

Երևան քաղաք հասցեով գտնվող 197 գ
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

ՆԿԱՏՄԱՄԲ

Հ. Հ. Կառավարության 21 նոյեմբերի 1998
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

N 311 որոշման ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ Ц-1 ՄԱՏՅԱՆԻ 00010 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՈՐԻՑ ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍ ՕՐԻՆԱԿԸ ՊԱՀՎՈՒՄ է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ
ԳԵԿԱՎԱՐ Ստ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«04» 12 1998թ.

№ 077505

ՀՈԴԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:2000

(մասշտաբ)



[illegible]	[illegible]	[illegible]
1 - 2	950	[illegible]
2 - 3	110,0	[illegible]
3 - 1	100,0	[illegible]

№	[illegible]
1	[illegible]
2	[illegible]
3	[illegible]

Կատարող [illegible]

(ստորագրություն)

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-009

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Հիդրոշինարարական

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Ֆերմերային կառուցապատման համար

ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) 1,3 հա

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ Օգտագործման

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-009

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ հասարակական նշանակության

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Ֆերմերային

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ(ՔՄ) 7203,19

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ Օգտագործման

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հ/Հ	ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵ-ՐԵՍԸ (քմ)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ
2	01-009	~~գրասենյակ~~ սպասարկման	48,45	Օգտագործման
3	01-009	Ներքին կացարան	86,32	Օգտագործման

Լրացուցիչ նշումներ; փոփոխություններ Հրդեհաշրջիչ գործիքի 20.09.13թ N: 8 արձանագրությամբ հաստատված է- եղել 1,8 հա հող: գրասենյակի օգտագործման է- 1,3 հա.

Կատարողներ՝ Գրիգորյան

(ստորագրություններ)

Հրաչիկյան

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:100

(մասշտաբ)

Հատակագիծը չունի տարբերություններ

(1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14)

Կատարող Հասմիկ Գրիգորյան

(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ԿՆԻՔ

ՎԿԱՅԱԿԱՆ

03 Ա 059466

իրավաբանական անձի պետական գրանցման

„Նորքի փուռ-բեյքերնաւր"
(անվանումը)
պետական ոչ առևտրային
կազմակերպություն

Գրանցված է պետական ռեգիստրի Մյասնիկյանի տ.բ. կողմից
(ստորաբաժանման անվանումը)

Գրանցման համարը 273.210.03443

Գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը 26.02.2003թ

Իրավաբանական անձի ծածկագիրը (կոդը) 10014829

Իրավաբանական անձի տեսակը Ոչ առևտրային

Գործունեության ժամկետը մինչեւ անժամկետ

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
(ստորագրություն)

«27» փետրվարի 2003 թ.

MINISTRY OF JUSTICE, STATE REGISTER MYASNIKYAN BRANCH

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 001

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 03Ա059466

Անվանումը „Նորքի փուռ-բեյքերնաւր" պետական ոչ առևտրային կազմակերպություն

Գտնվելու վայրը (հասցեն) ք. Երևան, Ա.Արմենակյան 197Ա

Այլ տեղեկություններ հանդիսանում 5 գր. հ273.0028 ՀՎ N 001490, գր. 23.12.96թ հիմնադիրը Տեոդոր Անդրանիկի Դանիելյան անձ AC 0490431 տրված 14.12.98թ 007; ք Երևան, Վ. Փափազյան 57

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
(ստորագրություն)

«27» փետրվարի 2003 թ.